



AUSTIN BEUTNER
SUPERINTENDENT OF SCHOOLS

**LOS ANGELES UNIFIED SCHOOL DISTRICT
LOS ANGELES SCHOOL POLICE DEPARTMENT**

Office of the Chief
125 North Beaudry Avenue, Los Angeles, California 90012
Telephone: (213) 202-4508 – Fax: (213) 202-8676



LESLIE RAMIREZ
INTERIM CHIEF OF POLICE

**ԹԵՄԱՎ ԾՆՈՂԻ/ԽՆԱՄԱԿԱԿ ՕՐԻՆՎԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՐԱՉԵՆՆ ԿՊԱՀՈՎ ՊԱՀՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հարգելի՛ ծնող/խնամակալ,

Մեր աշակերտների և անձնակազմի համար անվտանգ կրթական միջավայրի ապահովումը մնում է մեր առաջնահերթություններից մեկը: Բոլորս տեղյակ ենք մեր հարևան համայնքներում և ամբողջ երկրի տարածքում զենքի բռնության դեպքերի մասին: Կալիֆորնիայում ամեն տարի 18 տարեկանից ցածր միջին հաշվով 27 երեխաներ ինքնասպանություն են գործում հրազենով, որը պատկանել է տանը գտնվող ինչ-որ մեկին: Հրազենային միջադեպերից մեծ մասի դեպքում անչափահասն օրինական զենքով զենքը գտել է իրենց բնակավայրից կամ հարազատի բնակավայրից: Los Angeles Unified-ը քայլեր է ձեռնարկում՝ ապահովելու համար, որ դպրոցական կամայուսներն ապահով լինեն զենքի բռնության սպառնալիքից: Որևէ աշակերտի մոտ հրազեն հայտնաբերելու դեպքում նա անմիջապես կենթարկվի ձերբակալման, ժամանակավոր հեռացման տակ կորվի և կառաջարկվի նրան վտարել դպրոցից: Աշակերտներին հրազենից պաշտպանելու մեր ջանքերին նպաստելու համար և որպես հարգանք մեր ընտանիքների հանդեպ՝ Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում զենքն անփույթ պահելուց անչափահասներին պաշտպանելու իրավական պարտավորությունները: Ստորև ներկայացված են զենքը պահելու մասին օրենքներից երկուսը.

[Ձերի հրազենն ապահով պահելու մասին օրենք, Լոս Անջելեսի քաղաքային օրենսգրքի 55.21 բաժին](#)

Լոս Անջելես քաղաքի այս օրենքը հանցագործություն է համարում բնակավայրում հրազեն ունենալը, եթե այն փակի տակ պահված չէ, կամ, եթե Կալիֆորնիայի Արդարադատության դեպարտամենտի կողմից հաստատված ձգանի կողպեքը վնասված է:

[Հրազեն պահելու քրեական դեպքի մասին օրենք, Կալիֆորնիայի քրեական օրենսգրքի բաժին 25100\(A\)](#)

Այս օրենքը քրեականացնում է լիցքավորված զենքը Ձեր կողմից վերահսկվող ցանկացած տարածքում պահելը՝ իմանալով կամ ողջամտորեն պարտավոր լինելով իմանալ, որ երեխան, ամենայն հավանականությամբ, կարող է գտնել այն, և երեխային հասանելի է դառնում զենքը՝ մահվան կամ լուրջ մարմնական վնասվածքի պատճառ դառնալով:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կարդալ վերոնշյալ օրենքների ամբողջական տեքստը:

Հարգանքով՝

Leslie Ramirez
Ոստիկանապետի ժամանակավոր պաշտոնակատար

----- **ԿՏՐԵՔ ԱՅՍՏԵՂ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՐՈՒՔ ՁԵՐ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻՆ** -----



ՀՐԱՉԵՆԻ ԱՆԿՏԱՆԳ ՊԱՀՈՒՄ – ԸՆԴՈՒՄՍԱՆ ԶԵՎԱԹՈՒՂԹ

Խնդրում ենք ստորագրել ստորև՝ հաստատելով այս տեղեկատվության ստացումը:

Աշակերտի անունը (Տպատառերով) _____

Ծնողի/խնամակալի անունը (Տպատառերով) _____

Ծնողի/խնամակալի ստորագրությունը՝ _____ Ամսաթիվ՝ _____